ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՎԳ ՇԻՆ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ՎԱ-ՍԱՏՄ-ՀԲՄԽԾՁԲ-23/49 ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը՝ ստորև ներկայացնում եմ «ՎԳ Շին» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) (ՀՎՀՀ 04439128) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից կազմակերպված «ՎԱ-ՍԱՏՄ-ՀԲՄԽԾՁԲ-23/49» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ՎԳ Շին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 24.11.2023թ. կայացած՝ հայտերի բացման և գնահատման նիստի N03 արձանագրության համաձայն՝ մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերն առկա են, բացառությամբ.

- «ՎԳ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է դիմում-հայտարարությունը (Հավելված 1), փոխարենը ներկայացվել է Հավելված 1.3-ը, որը սակայն մասնակցի կարգավիճակից ելնելով անհրաժեշտ չէր ներկայացնել, քանի որ ընկերությունը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ (իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը անհրաժեշտ էր ներկայացնել դիմում-հայտարարությամբ (Հավելված 1)):

• Բացակայում է սույն ընթացակարգի հրավերի 2.7 կետով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար պահանջված՝ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

• Բացակայում է հրավերի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին հայտարարությունը՝ Հավելված N 1.1-ը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցել «ՎԳ Շին» ՍՊԸ-ին՝ վերջինիս հնարավորություն տալով սահմանված ժամկետում շտկելու առկա անհամապատասխանությունները:

28.11.2023թ.-ին կայացած նիստի N04 արձանագրությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ «ՎԳ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է շտկված դիմում-հայտարարությունը (Հավելված 1), իսկ հրավերի 2.7 կետով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար պահանջված՝ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին հայտարարությունը՝ Հավելված N 1.1-ը, դարձյալ չեն ներկայացվել: «ՎԳ Շին» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշել է մերժել «ՎԳ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի համաձայն, և օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ փաստաթղթերը ներկայացնելու պահանջ առաջադրել հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Ըստ այդմ, Հանձնաժողովը որոշել է ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել Ա/Ձ Արտակ Մարտիրոսյանին և հաստատել ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

21.12.2023թ. պատվիրատուի կողմից հրապարակվել է ՎԱ-ՍԱՏՄ-ՀԲՄԽԾՁԲ-23/49 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը (...), ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ (...), ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, (...):

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Պատվիրատուն արձանագրում է, որ «ՎԳ Շին» ՍՊԸ-ն, հրավերի 2.7 կետով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար պահանջված՝ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված

ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին հայտարարությունը՝ Հավելված N 1.1-ը սահմանված ժամկետում չշտկելով՝ խախտել է ***գնման գործընթացի շրջանակում իր կողմից ստանձնված պարտավորությունը,*** որը հանգեցրել է գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը***:***

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են «ՎԳ Շին» ՍՊԸ-ին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «ՎԳ Շին» ՍՊԸ-ին ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ